

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԵՎ «ՖՐԱՆՍ-ՖՈՐՄԱՍԻՈՆ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ» ՍՊԸ-Ի
ՄԻՋԵՎ

Ֆրանսերեն լեզվի դասընթաց
2010 թ.-ի մարտի 6-ից հոկտեմբերի 30 –ը

Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում 2010 թ.-ի մարտի 6 -ից հոկտեմբերի 30 –ը Գավառ քաղաքում կկազմակերպվի ֆրանսերեն լեզվի վերապատրաստում:

Վերապատրաստումը կներառի 4 ուղղություն.

1. Կրկնողության սեանսներ
2. Մարզի ֆրանսերեն դասավանդողների վերապատրաստում
3. Ֆրանսերեն լեզվի ուսուցում
4. Ֆրանսախոս հանդիպումներ

Այս ծրագրի իրականացման համար կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է.

Գեղարքունիքի մարզպետարանը

- Տեղյակ պահել Գեղարքունիքի մարզի և մասնավորապես Գավառի բնակչությանը ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում կազմակերպվելիք դասընթացի մասին
- Կազակերպել նոր ուսանողների գրանցումը և աջակցել «Ֆրանս-Ֆորմասիոն Ինտերնասիոնալ»-ի կողմից անց կացվող տեստավորանը

- Գրավոր թույլտվությամբ օժանդակել, որպեսզի «Ֆրանս-Ֆորմասիոն Ինտերնասիոնալ»-ն ազատ մուտք ունենա Սարուխան գյուղի հանրակրթական դպրոցներ:
- Համաձայն նախապես կազմված օրացույցի տրամադրել
 - 3 դասասենյակ դասերի անց կացման համար
 - 3 դասասենյակ կրկնողության սեանսների կազմակերպման համար
 - 1 դասասենյակ դասավանդողների վերապատրաստումն իրականացնելու համար
 - Բնակարան դասերի անց կացման վայրին մոտ 4 հոգու համար (հունիսի 16-ից օգոստոսի 22 -ը)
 - Տրանսպորտային միջոց դասախոսների և մանկավարժական նյութերի տեղափոխան համար


«Ֆրանս-Ֆորմասիոն Ինտերնասիոնալ»-ը

- Ապրիլ ամսից սկսած կազմակերպել և անց կացնել կրկնողության 5 սեանս
- Կազմակերպել և անց կացնել 5 ֆրանսախոս հանդիպում
- Կազմակերպել ֆրանսերեն լեզվի դասավանդողների վերապատրաստում համաձայն նախապես մշակված ծրագրի
- Անց կացնել բոլոր ուսանողների գիտելիքների տեստավորում և վերջիններիս գրանցել հաապատասխան խմբերում դասերի սկսվելուց առնվազն 15 օր առաջ
- Ծրագրի իրականացման ընթացքում կապ պաշտպանել Գեղարքունիքի մարզպետարանի հետ
- Դասընթացի ավարտին կազմակերպել հաշվետու երեկույթ

Գավառ (Հայաստան)

Մարզպետ

Նվեր ՊՐԻՆՍՅԱՆ



Երևան (Հայաստան)

Տնօրեն

Լիլյա ՇԱԼՈՒՆՑ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի N4 միջնակարգ դպրոցում ֆրանսերեն լեզվի լրացուցիչ դասընթաց կազմակերպելու մասին

<20 >> հոկտեմբեր 2011

Ք. Երևան

Ֆրանսիայի Հանրապետության Ռոման քաղաքի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ՝ Ա. Բերտոլեյի, մի կողմից, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետ՝ Ն. Պողոսյանի, Վարդենիսի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ՝ Վ. Խլոյանի, <<Ֆորմասիոն Ինտենսիվ>> ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն՝ Ք.Պետրոսյանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի N 4 միջնակարգ դպրոցը, ի դեմս տնօրեն՝ Անահիտ Սահակյանի, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Կազմակերպել ֆրանսերեն լեզվի լրացուցիչ դասընթացներ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի N 4 միջնակարգ դպրոցում:

2. Կողմերի պարտականությունները՝

2.1 Ռոման քաղաքը պարտավորվում է հատկացնել համապատասխան ֆինանսական միջոցները ֆրանսերեն լեզվի ուսուցչին վճարելու համար, այն է ամսեկան 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, որը ներառում է նաև գործատուի կողմից վճարվելիք պարտադիր Սոց վճարները:

2.2 Գեղարքունիքի մարզպետարանը պարտավորվում է աջակցել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի N 4 միջնակարգ դպրոցում ֆրանսերեն լեզվի լրացուցիչ դասընթացներ կազմակերպելուն:

2.3 Վարդենիսի քաղաքապետարանը պարտավորվում է աջակցել ֆրանսերեն լեզվի լրացուցիչ դասընթացների անցկացմանը:

2.4 ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի N 4 միջնակարգ դպրոցը պարտավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի ընդունել ֆրանսերեն լեզվի ուսուցիչ և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր, յուրաքանչյուր ամսվա համար վճարել աշխատավարձ, մինչև հաջորդ ամսվա 15-ը:

2.5 <<Ֆորմասիոն Ինտենսիվ>> ՍՊԸ պարտավորվում է յուրաքանչյուր ամսվա վերջում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի N 4 միջնակարգ դպրոցի հաշվեհամարին փոխանցել 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Ֆրանսերեն լեզվի ուսուցչին ցուցաբերել մեթոդական աջակցություն:

3. Պայմանագրի գործունեության ժամկետը

Սույն պայմանագիրը գործում է <20 >> հոկտեմբերի 2011թ.-ից մինչև

<< 31 >> 4-նոյեմբեր 2012թ.:

4. Պայմանագիրը կնքվում է հինգ հավասարազոր օրինակից, որոնք ունեն նույն իրավական ուժը և յուրաքանչյուր կողմին տվում է մեկ օրինակ:

5. Կողմերի հասցեները

Ֆրանսիայի Հանրապետություն
քաղաք Ռեման
ժուլ Նադի փողոց, Բ-Պ1012
Քաղաքապետ *AS* Ա. Բերտոլեյ

Գեղարքունիքի մարզպետարան
Քաղաք Գրիգոր Երևանյորիչ 36
Մարզպետ *[Signature]*
«Տնօրենի Բնտենսիվ» ՍՊԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի
Վարդենիսի քաղաքապետարան
Հ. Անդրեասյան 4
Քաղաքապետ *[Signature]* Ա. Խլոյան

քաղաք Երևան
Տիգրան Մեծի-4
Տնօրեն *[Signature]* Զ. Պետրոսյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս
քաղաքի N 4 միջնակարգ դպրոց
Հասցեն՝ ք. Վարդենիս Շահումյան 5
Տնօրեն *[Signature]* Անահիտ Սահակյան
ՀՎՀՀ08802727
Հ/Հ 2477501581040000